

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1982

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԵԾԱԳՈՅՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ



**ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH
OF GREATER MONTREAL**

**615 STUART AVE., OUTREMONT, P.Q. H2V 3H2
TEL.: 279-3066 — 279-6884**

Հ ր ա լ է ր Տարեկան Անդամական Ժողովի

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու Միական Խորհուրդը այսու կուզան Ձեզ հրաւիրելու Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովի, որ պիտի զամարուի

ԿԻՐԱԿԻ, 20 ՓԵՏՐՈՒԱՐ 1983, ԺԱՄԸ 14-ԻՆ
ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ

Իւրաքանչիւր արատու անդամի պարտականութիւնն է, աւերելը վճարած ըլլալու պայմանաւ, դէժ վերջին երկու տարիներուն, ներկայ գտնուիլ սոյն կարեւոր Անդամական Ժողովին, որուն օրակարգի նիւթերն են հետեւեալները.

- 1) Աղօթք եւ բացում.
- 2) Ընտրութիւն օրումն դիւանի
- 3) Ընթերցում Ապօստոլ Ընդ. ժողովի ատենագրութեան եւ վաւերացում
- 4) Ընթերցում միւթա-բարոյական տեղեկատուութեանց եւ վաւերացում
- 5) 1983 տարումն Ապօստոլի վաւերացում
- 6) Վաւերացում Ընտրողական Մարմնի մերկայացուցած բեկնածուներու անուններում
- 7) Գանատայի Առաջնորդութիւն
- 8) Ընտրութիւն երկու Պատգամաւորներու
- 9) Ընտրութիւն հինգ Միական Խորհուրդոյ անդամներու
- 10) Ընտրութիւն հինգ Ընտրողական Ցանձմախումբի անդամներու
- 11) Ընտրութիւն երեք Հաշուեքննիչ Մարմնի
- 12) Թեւադրութիւններ եւ գանազանք
- 13) Փակման խօսք եւ օրհնութիւն:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

ԿԻՐԱԿԻ, 27 ՓԵՏՐՈՒԱՐ 1983, ԺԱՄԸ 13.00-17.00-Ի ՄԻՋԵԻ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԱՐԻՊԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՁ

Յ.Գ. *Նկատի ունենալով Թղթատարութեան սակերու յաւելումները, ինչպէս նաեւ անկանոն ցրուումը, տարեկան տեղեկատուութեանց զբօսյալ միասին չի ղրկուիր, ժողովին օրը ներկայ եղող անդամներուն պիտի արուի :*

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՍԱԽՈՒՄՔԻ 1982 ՏԱՐԵՐՁԱՆԻ ԿԱԶՄԸ

- Տիկ- Վարդուհի Պալեան
- Պրն. Արա Կէրիկեան
- Պրն. Վահան Շաքարեան
- Պրն. Աւետիս Ժիհանեան
- Պրն. Յարութիւն Սրմաքէշեան

ԹԵՄԱԵՆՈՒՆԵՐ 1988 ՏԱՐԵՐՁԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ատենապետութեան: Պասմաճեան Արթո

Ատենադպրութեան: Մանկասարեան Յասմիկ

ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐՈՒ (ընտրելի 2 ԳՈՂԻ միայն)

- Գարիպեան Աշոտ
- Խաչիկեան Յակոբ
- Չատրճեան Անդրանիկ
- Փելթէքեան Գէորգ

ԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ (ընտրելի 5 ԳՈՂԻ միայն)

- 1) Աղազարեան Թազուհի
- 2) Գալայճեան Տիգրան
- 3) Գալուստեան Օննիկ
- 4) Կէրիքեան Արա
- 5) Եիրիսեան Անդրանիկ
- 6) Պալեան Օննիկ
- 7) Պապիկեան Նուպար
- 8) Պասմաճեան Արթո

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՍԱԽՈՒՄՔԻ (ընտրելի 5 ԳՈՂԻ միայն)

- 1) Արթինեան Յակոբ
- 2) Արսէվէր Ռուբէն
- 3) Կէրիքեան Յակոբ
- 4) Ժիհանեան Աւետիս
- 5) Մելիքեան Արամ
- 6) Շաքարեան Վահան
- 7) Պալեան Վարդուհի
- 8) Տէր Գէորգեան Հրայր
- 9) Սրմաքէշեան Յարութիւն

ՀԱՇՈՒԹՅՆՍԻՉ ՄԱՐՄՆԻ (ընտրելի 3 ԳՈՂԻ միայն)

- 1) Թորիկեան Հրաչ
- 2) Կարապետեան Թովմաս
- 3) Կոլտսուղեան Միսաք
- 4) Ժանճիկեան Յակոբ
- 5) Մուրատեան Շահան
- 6) Չատրճեան Անդրանիկ

Ողորմութեամբն Աստուծոյ, տարի մը եւս բոլորեցինք այս պատուական գաղութն ներս որպէս Կամայնք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Մոնթրէալի: Պահելով մեր Կաթողի ու Նուիրումի ոգին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ:

Պարտք կը զգամ իմ որդիական ակնածանքն ու անկեղծ շնորհակալութիւնները յայտնելու, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, որ միշտ քաջալերեց մեզ իր այցելութիւններով եւ իր տուած յորդորներով: Իմ շնորհակալութիւնս նաեւ Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ պատուարժան ծխական Խորհուրդին եւ անոր յարգարժան ատենապետին՝ Տոբթ. Յարութիւն Արզումանեանին, որոնց Կեա միասին, տարի մը եւս բոլորեցինք ներդաշնակ ու Կամերաշխ. իմ կարողութեան սահմաններուն մէջ ծառայեցի Մոնթրէալի մեր պատուական Կամանքին, առանց որեւէ խտրականութեան: Տարուան ընթացքին, սուրբ պատարագ եւ այլ եկեղեցական արարողութիւնները կատարուեցան անխափան. այցելեցինք մեր Կօտին. կատարեցինք տունօրհնէքներ. բժախնդիր կերպով Կեասանդեցիք այն Կիւանդները, որոնք անկողնոյ կը ծառայեն. այցելեցինք Կիւանդանոցներ գտնուող Կիւանդներու, որոնց սուրբ Կողորդութիւն մատակարարելով ու մեր աղօթքներով մխիթարեցինք ու ուրախացուցինք: Մեր այս այցելութիւններուն գրեթէ միշտ մեզի ընկերացաւ մեր շատ սիրելի Կիւանապետ Պրն. Վահէ Զէթլին, որ առաջին օրէն ի վեր մեզի իր եղբայրական գուրգուրանքը անպակաս ըրաւ. իմ անկեղծ շնորհակալութիւնս իրեն:

Այս տարեշրջանին, եկեղեցւոյ նորոգութեան եւ բարեգարդումի առիթով կոչուողեցինք մեր սիրեցեալ Կօտին եւ իրենց նիւթական օժանդակութիւնը խնդրեցինք: Այս Աստուածաբանոյ գործին Կամար: Մեր օրհնութիւններն ու շնորհակալութիւնները բոլոր այն Կաթապետներուն, որոնք ընդառաջելով մեր կոչին, բերին իրենց նիւթական լայն օժանդակութիւնը, եւ մենք, կրցանք մեր սուրբ տաճարը ալ աւելի ներկայանալի վիճակի բերել: Այստեղ սրտի պարտք կը Կամարեմ իմ գնահատանքն ու օրհնութիւնները յայտնելու ազգային անզուգական բարերար Տիար Ալեք Մանուկեանին, որ մեր կոչին պատասխանեց 7000 ամերիկեան տոլարի օժանդակութեամբ մը: Թող Տէրը իրեն երկար կեանք ու արեւշատութիւն պարգեւէ:

Այս շրջանին, մեր գեղակերտ տաճարը զարդարուեցաւ ութ նոր ջահերով, խորանի կամարի պատգամագիրով. տակաւին պէտք ունինք տասը ջահերու, եթէ կան նուիրատուներ եւ որոնք կը փափաքին իրենց ննջեցելոց անունները յաւերժացրել թող բարի ըլլան Կիւմելու մեզի: Այս նուիրական գործին Կամար:

Այս տարեշրջանին, գանազան առիթներով, ընդունեցինք այցելութիւնները Թեմի Բարեխնամ Առաջնորդին, Հոգ. Տ. Նուրիան Վրդ. Մանուկեանի, Հոգ. Տ. Եզնիկ Արք. Խրեանեանի, Արժ. Տ. Յուսիկ Զնյ. Նշանեանի, Կնչպէս նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ատենապետ Գերշ. Տ. Սիոն Արք. Մանուկեանի: Մեր սիրելի Առաջնորդ Սրբազան Հայրը, այս անցնող տարուան ընթացքին, երեք անգամներ, գանազան առիթներով, պաշտօնապէս այցելեց մեր գաղութը, որ մեծ ուրախութիւն ու խանդավառութիւն պատճառեց մեզի եւ մեր ժողովուրդին: Իմ յատուկ շնորհակալութիւնները իմ Կոզեւոր եղբոր՝ Արժ. Տ. Մալակ Ա. Զնյ. Պալեանին, որ Կակառակ իր յառաջացած տարիքին, ամէն Կիրակի ներկայ եղաւ եկեղեցական արարողութիւններուն, Կնչպէս նաեւ կարգ մը խորհրդակատարութիւններուն:

Այս տարի, Աստուծոյ Կրամանով, կատարուեցան խորհրդակատարութիւններ. Մկրտութիւն՝ 44, պակարողութիւն՝ 24 եւ մահագրութիւն՝ 30:

Պարտականութիւն կը նկատեմ հրապարակային շնորհակալութիւններ յայտնելու Կոմիտաս Դարաց Դասին իւրաքանչիւր անդամին, որոնք իրենց զեղեցիկ երգեցողութեամբ փայլը կրկնապատկեցին եկեղեցւոյ արարողութիւններուն: Մեր օրհնութիւններն ու գնահատանքը Կոմիտաս Դարաց Դաս-Նրգչախումբի վարչական կազմին, իրենց նուիրեալ ատենապետ՝ Պրն. Գէորգ Փելթէքեանին, ղարապետին, վարիչներուն, երգեհոնահարներուն եւ մեր շատ սիրելի անդամ եւ անդամուհիներուն: Յատուկ շնորհակալութիւն մեր սարկաւազ եւ ուրարակիր ղախիրներուն, որոնք ամէն Կիրակի, մեզի հետ անխափան ծառայեցին ի պայծառութիւն մեր եկեղեցւոյ:

Շնորհակալութիւն եկեղեցւոյս պաշտօնաթերթ "Բուրաստան" ի խմբագրական կազմին: Պրնք. Պերճ ֆազլեանի եւ Վահէ Զէթլիի, եւ ամէն անոնց, որոնց տարած բծախնդիր ու անխոնջ աշխատանքին շնորհիւ միշտ գնահատական գրութիւններ կը ստանանք աշխարհի ամէն կողմէ:

Մասնաւոր շնորհակալութիւն եկեղեցւոյս Տիկնանց Միութեան յարգարժան անդամուհիներուն, որոնք ինչպէս անցեալին, այս տարի եւս, իրենց ցուցաբերած զոհողութեան ոգիին շնորհիւ յաջող ու արդիւնաբեր տարեշրջան մը բոլորեցին: Շնորհակալութիւն նորակազմ Հոգատար Մարմնի անդամուհիներուն. իրենց այս անդրանիկ տարին պսակուեցաւ բացառիկ յաջողութեամբ ի պայծառութիւն մեր Ս. Եկեղեցւոյ:

Շնորհակալութիւն եկեղեցւոյս Շաքաթօրեայ Վարժարանի Խնամակալ Մարմնի ժրջան անդամներուն, Տնօրէնին, ուսուցչական կազմին, որոնց անշահախնդիր աշխատութեան շնորհիւ ունեցան բեղուն գործունէութիւն, տօնելով ղարոցի հիմնարկութեան 25-ամեակը:

Շնորհակալութիւն եկեղեցւոյս Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբին, որոնք լծուած են աշխոյժ աշխատութեան, տօնելու համար Ս. Ներսէս Շնորհալիի ծննդեան 880-ամեակը:

Շնորհակալութիւն եկեղեցւոյս նորակազմ Երիտասարդաց Կազմակերպութեան, որոնք սկսած են եկեղեցւոյ շուրջ ունենալ եռանդուն գործունէութիւն:

Սիրելի ու հաւատացեալ ժողովուրդ մեր, ամէնքս միասիրտ աղօթենք Մայր Աթոռոյ անսասնութեան ու բարգաւաճութեան: Աղօթենք մեր սիրելի Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Կաթողիկոսի առողջութեան եւ արեւշատութեան, Հայ Եկեղեցւոյ պայծառութեան ու համայն աշխարհի խղաղութեան համար: Թող բարեգութ Տէրը առաջնորդէ մեր խորհուրդներն ու քայլերը դէպի բարին ու մշարիտը, ըստ բարերար կամաց իւրոց ի փառս Աստուծոյ:

" Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր եւ զգործս ձեռաց մերոց յաջողեայ մեզ " :

Աղօթարար

Տ. ԲԱՐԹՈՂ Ա. ԲՀՆՅ. ԽՐԶԱԾԵԱՆ

Ա. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ ծխական Խորհուրդս, նորրոսիւր չորս անդամներու մասնակցութեամբ, իր անդրանիկ նիստը զուամրեց 14 Ապրիլ 1982-ին, նախագահութեամբ արժանընտիր Բոգեւոր Գովիլ Տ. Բարթող Ա. Զինյ. Խրքածեանի եւ ընտրեց իր նոր դիւանը ըստ հետեւեալին.

- | | |
|-----------------------------|---------------|
| Տոքթ. Յարութիւն Արզումանեան | Վտենապետ |
| Տոքթ. Յակոբ Խաչիկեան | Փոխ-ատենապետ |
| Պրն. Ժիրայր Այվատեան | Վտենադպիր |
| Պրն. Անդրանիկ Թադոսեան | Փոխ-ատենադպիր |
| Պրն. Գրիգոր Տիգրանեան | Գանձապահ |
| Պրն. Գէորգ Մանուկեան | Հաշուապահ |
| Պրն. Անդրանիկ Նազարեան | Խորհրդական |
| Պրն. Գէորգ Փելթեքեան | Խորհրդական |
| Պրն. Աշոտ Գարիպեան | Խորհրդական |

Մինչեւ Դեկտեմբերի վերջ, Խորհուրդս զուամրեց 28 նիստեր, Արժանաշնորհ Հովիւին նախագահութեամբ եւ աշխուրջ ու խղճմտօրէն քննարկեց, միայն ու միայն, Եկեղեցւոյս նիւթաբարոյական շահերուն յատուկ հարցեր, խաղաղ ու համերաշխ մթնոլորտի մէջ:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՔ. Խորհուրդս, իրեն ենթակայ մարմիններու հետ, ունեցաւ ամբողջական ու մասնակի հանդիպումներ, տեղեկանալու համար նոր շրջանի ծրագրելի աշխատութեանց, կարելի սահմաններու մէջ օգնելու իրենց անհրաժեշտ կարիքներուն: Խորհուրդոյս անդամները ստանձնեցին պարտականութիւններ, մասնակցելով անոնց ժողովներուն՝ յարաբերական կապերը սերտացնելու նախամտածումով:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ .- Ա. Եկեղեցաշէնքի անյետածգելի նորոգութիւններու պարագան, առաջին օրէն, առանցքը կազմեց մեր աշխատութիւններուն: Այս ուղղութեամբ Արժանաշնորհ Հոգեւոր Հովիւս նամակներով դիմեց բոլորին. շատեր անմիջապէս պատասխանեցին օժանդակելով մեր ծրագրին: Նորոգուեցաւ տանիքը, մասնակի կերպով, առաջն առնելու աւերին, ներկուեցաւ եւ բարեգարդուեցաւ տաճարը ամբողջութեամբ. նորոգուեցան եւ ներկուեցան ամբողջ պատուհանները: Նորոգութեանս այս դժուարին գործին, Խորհուրդոյս անդամներէն Պրն. Անդրանիկ Նազարեան բծախնդրօրէն ընթացք տուաւ եւ հսկեց կատարուած նորոգութիւններուն:

Բ. Օգտուելով պետութեան եւ ընկերութեան օժանդակութենէն, ձեռնարկեցինք փոխել ջեռուցման իւղի դրութիւնը բնական կազի դրութեան, յառաջիկային ապահովելու համար կարեւոր խրանայողութիւն մը: Ամէն ինչ վերջացած է. կը սպասուի ժամացոյցներու զետեղման:

Գ. Ծրագրեցինք Ամերիկեան Իողամասերու վրայ, եկեղեցիներու համար սովորութիւն դարձած պինկօն Բոս եւս կիրարկել: Այս հարցը կը մնայ որպէս ծրագիր:

Դ. Բաց պահեցինք Եկեղեցւոյս Դիւանատունը, ամէն օր, փորձագէտ դիւանապետ Պրն. Վահէ Զէթլի առաւելագոյն չափով կարելին ի գործ դրաւ օգտակար հանդիսանալով դիմողներուն:

Ծ. "Բուրաստան" պաշտոնաթերթս կանոնաւոր կերպով ու տպա-
ւորիչ բովանդակութեամբ մտաւ ձեր տուներէն ներս, ար-
ժանանալով զնահատանքի:

Ձ.- Բժախնդրօրէն հսկեցինք եկեղեցւոյ մաքրութեան ու պահ-
պանման: Նկատի ունենալով ժամկոչին բաւական յառաջացած
տարիքը, իրենց տեղ պաշտօնի կոչեցինք նոր ընտանիք մը: Տէր եւ Տիկ. Յա-
րութիւն Աբանեաններ:

Է.- Վերջապէս կարելի եղաւ իրականացնել մեր տարիներու ծրա-
գիրը, վերակազմելով ՀԵԵԿԱ-ն եւ համախմբելով 25-է աւե-
լի երիտասարդներ, Եկեղեցւոյս նուիրական, խնկաբոյր երդիքին տակ:

Ը.- Կարգ մը եկեղեցանուէր ազգայիններ դիմած էին Հոգեւոր
Հովիւին Հոգատար Մարմին անունին տակ աշխատելով օգտա-
կար հանդիսանալու համար: Գրկաբաց ընդունեցինք զիրենք, վաւերացնելով
կազմը:

ՉԵՌՆԱՐԿՆԵՐ.- Առաւելագոյնս օգտուելու միտումով, այս տարուան պարահանդէ-
սը կազմակերպեցինք Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Վարժարանի
Կէօնմեան Սրահին մէջ, մեր միջոցներով, առանց տէպիւթանթներու, ունեցանք
մեր ակնկալած յաջողութիւնը:

Բ.- Խորհուրդոյս հովանաւորութեամբ եւ համայնքային կազմա-
կերպութիւններու մասնակցութեամբ նշեցինք ԱՊԻԼ 24-ը,
խորհրդաւոր ու կոկիկ յայտագիրով մը:

Գ.- Շաքաթօրեայ Վարժարանիս 25-ամեակի հանդիսութեան նախա-
գահեց արժանընտիր Առաջնորդ Սրբազան Հայրը: Ծնորհիւ
Խնամակալութեան ջանքերուն, ունեցանք բարոյական բացառիկ յաջողութիւն:

Դ.- Մեր շրջանին վիճակեցաւ Եկեղեցւոյս պարտամուրհակը հոր-
կիզելու երջանկութիւնը: Այս առթիւ կազմակերպուած հան-
դիսութեան ներկայ էին համայնքիս բոլոր մարմիններէն ներկայացուցիչներ:
Առաջնորդ նորին Սրբազնութիւնը իր բարձր ներկայութեամբ աւելցուց օրուան
փայլը:

Ե.- Եկեղեցւոյս Տօնախմբութեան օրը այլեւս վճռուած է. Ս.
Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն տօնին կը զուգարդիպի
ամէն տարի Յունիս ամսուան մէջ: Այս տարի, յոգնախուռն բազմութեան ներկա-
յութեան պատարագեց եւ քարոզեց Թեմիս Հայրախնամ Առաջնորդ: Գերշ. Տ. Թոր-
գոմ Արք. Մանուկեան: Յառաջիկայ տարի, Յունիսի 5-ին, եւս մեծ շուքով տօ-
նելու ակնկալութեամբ դիմած ենք Առաջնորդարան:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Տարւոյս ընթացքին, պատեհութիւնը ունեցանք մեր մէջ ըն-
դունելու վիճակիս Բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը,
զանազան առիթներով քանիցս, Հոգշ. Տ. Նուրբան Վրդ. Մանուկեանը, Հոգշ.
Տ. Եզնիկ Արք. Խրքամեանը, Հոգեւոր Գերագոյն Խորհուրդոյ ատենապետ Գերշ.
Տ. Սիոն Արք. Մանուկեանը, որոնք պատարագ մատուցին, քարոզեցին կամ նախա-
գահեցին Եկեղեցւոյս մէջ, առ ի միխթարութիւն հաւատացեալներու: Նոյնպէս

Հայրենի անուանի արուեստագէտներու հոյլ մը եկան, տրուած բացատրութիւններով բաժնուեցան զո՛ր տպաւորութեամբ:

ՀԱՇՈՒԱԿԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պրն. Միսաք Կուտսուզեան, այս տարի եւս, սիրայօժար կատարեց հսկողութիւնը հաշուակալական հարցերուն, որուն կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները:

Ենորհակալութիւններ նաեւ մեր շրջանաւարտ Խորհուրդոյս անդամներուն, Կոմիտաս Կարապետ Կարչութեան, ազնիւ վարիչներուն, բարեշնորհ սարկալագներուն, մէն մի դպիրին եւ երգչախումբի անդամներուն, Տիկնանցի, Հոգատար Մարմնոյ, Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի, Վարժարանի Խնամակալութեան, տնօրէնութեան եւ ուսուցչաց կազմին, ՀԵՆԿԱ-ին, Բուրաստանի խմբագրական պատասխանատու Պրն. Պերճ ֆազլեանի, յարգելի դիւանապետ Պրն. Վահէ Բէթլիի, որոնց բոլորին շնորհիւ այսօր կը ներկայանանք զօրունակ:

Ենորհակալութիւն համայնքային Մարմիններու Վարչութեանց եւ Ձեզի մեր յուսոյ ու լոյսի յաւերժական անսպառ արջիւր Ս. Էջմիածնի ու հրաշագործ Մայր Հայրենիքի հաստատակամ ու հաւատաւոր զաւակներուդ:

Ի դիմաց ծխական Խորհուրդի
ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ
Ատենապետ

ԺՈՐԱՅՐ ԱՅՎԱՏԵԱՆ
Ատենադպիր

Կոմիտաս Դպրաց Դասու Տարեկան Ընդհանուր ժողովը գումարուեցաւ 17 Մարտ 1982-ին, նախագահութեամբ Արժ. Տ. Բարթոլ Ա. Զինյ. Խորթածեանի, Դպրաց Դասու Սրահին մէջ: Նորընտիր Վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարելով կազմեց իր դիւանը. հետեւեալ կերպով.

- | | |
|-----------------------|--------------------|
| Պրն. Գէորգ Փելթեբեան | Ատեանպետ |
| Պրն. Վահան Շաքարեան | Փոխ-ատեանպետ |
| Օր. Սիլվա Տէմիրժեան | Ատեանադպիր |
| Պրն. Արա Կէրիքեան | Գանձապահ |
| Պրն. Զօհրապ Զավուշեան | Խորհրդական |
| Պրն. Արա Թօշիկեան | Խորհրդական-Դպրապետ |
| Պրն. Վահէ Զէրէսթէժեան | Խորհրդական |

Դասուս Վարչական կազմին, ի պաշտօնէ, մաս կը կազմեն նաեւ Տիկ. Սելմա Բէքլիկեան՝ խմբավար եւ Պրն. Արթօ Միւհիէնտիսեան՝ երգեցողնաւար:

ԶԵՆՈՒՄԻՆՏԸ .- Դպրաց Դասս իր մասնակցութիւնը բերաւ Ս. ծննդեան եւ Ս. Զատիկուան առիթներով, Օթառայի մէջ մատուցուած Ս. Պատարագի երգեցողութեանց:

27 Փետրուար 1982, Շաքարժ օր, Դպրաց Դաս-Երգչախումբը, Եկեղեցւոյս մէջ, ներկայացուց Վարդանանցի նուիրուած յուշահամերգ մը, որուն ընթացքին ներկայացուեցաւ Հ. Պէրպէրեանի «Վարդանանք» ը:

Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն, Երգչախումբը, մասնաւոր հրաւերով, երկու անգամ, ելոյթ ունեցաւ «Մարդը եւ իր Աշխարհը» Բէպէք տաղաւարին մէջ եւ արժանացաւ ներկայ ժողովուրդին բարձր գնահատանքին:

19 Դեկտեմբերին, կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ պաշտօն, Դասէս անդարձ բաժնուող անդամներուն ի յիշատակ, որուն յաջորդեց Կոմիտաս Դպրաց Դասու հիմնարկութեան 24-րդ տարեդարձի հանդիսութիւնները, որոնք տեղի ունեցան Մարի Մանուկեան Սրահին մէջ: Ճաշկերոյթով եւ կոկիկ յայտագիրի գործածութեամբ:

Կոմիտաս Երգչախումբը իր օժանդակութիւնը բերաւ նաեւ հետեւեալ ձեռնարկներուն.

ՀԲԸՄ-ի տեղւոյս Մասնաճիւղին կազմակերպած Սպենտիարեանի նուիրուած յուշատօնին, ներկայացնելով «Ալմաստ» օփերայէն մաս մը:

Լօրէնս, Մէսաչուսէցի Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ 50-ամեակի հանդիսութեանց: Ութրմոն քաղաքապետարանի մէջ կատարուած միացեալ պաշտամունքին:

Ապրիլ 24-ի մեր Բիւրաւոր Նահատակներու խնկելի յիշատակին կատարուած արարողութեանց:

Ներկայիս, Դպրաց Դասը, Լրջօրէն, կը պատրաստուի 25-ամեակի հանդիսութեանց, որուն գլխաւոր ձեռնարկը պիտի հանդիսանայ, Հոկտեմբեր 22-ին, Գլօտ Շամփայն Սրահին մէջ տեղի ունենալիք մեծ համերգը:

1982 տարեշրջանին, Դասուս շանքերով եւ երգչախումբիս անդամուհիներէն Տիկ. Արշալոյս Մէնէնտեանի եւ գաւակներուն նուիրատուութեամբ, իրենց ողբ. ամուսնոյն եւ հօր՝ Մկրտիչ Մէնէնտեանի քաղցր ու անմոռաց յիշատակին, Եկեղեցւոյս Ս. Խորանի կամարին վրայ գետեղուեցաւ, երկար ատենէ ի վեր ծրագրուած, պատգամ-գրութիւնը: Այս պատեհ առիթով, կուզանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու Մէնէնտեան ընտանիքի անդամոց:

Մեր պարտածանաչ անդամ-անդամուհիները անխափան, հերթական կարգով, ներկայ եղած են տարւոյս բոլոր Կիրակիներուն մատուցուած Ս. Պատարագներու բազմաձայն երգեցողութեանց, դպրապետութեամբ՝ Պրն. Արա Թօշիկեանի եւ Փոխ-դպրապետութեամբ՝ Պրն. Վահան Շաքարեանի:

Երգչախումբի փորձերը, ամենայն կանոնաւորութեամբ եւ բծախնդրութեամբ, կը կատարուին Չորեքշաբթի երեկոները: Եկեղեցական երգերը, ղեկավարութեամբ՝ Պրն. Արա Թօշիկեանի, իսկ ժողովրդական երգերը, ղեկավարութեամբ՝ Տիկ. Սելմա Զէքլիկեանի. երգերն ու իր դրական մասնակցութիւնը կը բերէ Պրն. Արթօ Միւհիստիսեան: Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ խումբին մաս կազմող բոլոր անդամ-անդամուհիներուն՝ իրենց ցուցաբերած զոհողութեանց եւ պարտամանաչութեանց:

Շնորհակալութեան լայն բաժին մը, մեր ժրջան ու պարտամանաչ Հովիւին՝ Արժ. Տ. Բարթող Ա. Զինյ. Խրքամեանին, որ ձեռնհասօրէն կը հսկէ մեր աշխատանքներուն, եւ իր փորձառու ցուցմունքներով մեծապէս կը դիւրացնէ մեր աշխատանքները:

Շնորհակալութիւն նաեւ Տիկ. Սելմա Զէքլիկեանի, Պրնք. Արա Թօշիկեանի եւ Արթօ Միւհիստիսեանի, որոնք զնախապէս պարտամանաչութեամբ եւ անձնուր-ւիրութեամբ կը ղեկավարեն Եկեղեցայն Երգչախումբը, հասցնելով զայն այսօրուան նախանձելի դիրքին, ոչ միայն Սոնթրէալի, այլեւ Հիւս. Ամերիկայի բովանդակ տարածքին վրայ:

Վարչութիւնս պարտք կը զգայ նաեւ իր շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց, որոնք նիւթապէս թէ քարոյապէս զօրավիգ կը կանգնին Կոմիտաս Կարաց-Երգչախումբին եւ կը քաջալերեն զայն ամէն առիթով: Ատանց իրենց օժանդակութեան, կարելի պիտի չըլլար յառաջանալ դէպի լաւագոյնը եւ գլուխ հանել այս Աստուածահամոյ ու ազգօգուտ աշխատանքները:

Ի դիմաց Վարչութեան
ԳԵՈՐԳ ՓԵԼՔԵՅԵԱՆ
Ատենապետ
ՍԻԼՎԱ ՏԷՄԻՐՃԵԱՆ
Ատենաղախ

Եկեղեցւոյս Երաթօրեայ Վարժարանի 1982-83 տարեշրջանի վերամուտը տեղի ունեցաւ 11 Սեպտեմբեր 1982 Երաթ օր Ալեք Մանուկեան դպրոցաշէնքին մէջ: Բացման հանդիսութեան նախագահեց Տ. Բարթող Ա. Զինյ. Խրքամեան: Ներկայ եղան ծխ. Խորհուրդոյ, Խնամակալ Մարմնի անդամներ, Տնօրէնութիւն եւ Ուսուցչաց կազմ:

Խնամակալ Մարմինը, ինչպէս նախորդ տարիներուն, նիւթա-բարոյական կարիքները կը հոգայ հետեւեալ անդամներով. Տիկ. Էլտա Աբգիարիթեան՝ Ատենապետ, Տոբթ. Յարութիւն Էսէկիւլեան՝ Փոխ-ատենապետ, Պրն. Անդրանիկ Սայեան՝ Ատենադպիր, Պրն. Վահէ Զէրէսթեմեան՝ Գանձապահ, եւ Խորհրդականներ՝ Տիկ. Անգինէ Շաքարեան, Պրն. Վահան Շաքարեան, Տիկ. Արշալոյս Մէնէնտեան, Տիկ. Շուշան Մէթ: Ծխ. Խորհուրդոյ ներկայացուցիչն է՝ Պրն. Անդրանիկ Նազարեան:

Այս տարեշրջանի սկիզբը, Վարժարանի նախկին քազմավաստակ տնօրէն՝ Բարշ. Օսնիկ Սրկ. Գալուստեան, կամբէ անկախ, առողջական ու քազմազբաղ վիճակին բերումով հրժարեցաւ, որով Խնամակալութիւնը ծխ. Խորհուրդին գիտակցութեամբ, տնօրէնութեան պաշտօնը յանձնեց, Պոլսէն նոր ժամանած, փորձառու ուսուցիչ եւ տնօրէն՝ Պրն. Արօ Բարաղամեանի, որ ձեռնհասօրէն սկսաւ վարել, առաջնորդելով հետեւեալ նուիրեալ ուսուցիչները. Տիկ. Անահիտ Չաքրճեան՝ Ը կարգ, Օր. Անի Էսէկիւլեան՝ Է, Պրն. Յակոբ Զըլըճեան՝ Ե, Զ, եւ պարուսոյց, Տիկ. Ենորիկ Գրիգորեան՝ Դ, Օր. Նինա ձերունեան՝ Գ, Տիկ. Սիլվա Չիլինկիրեան՝ Ա եւ Բ, Տիկ. Արմինէ Վարապետեան՝ Բ մանկապարտէզ եւ պարուսոյց, Տիկ. Հիլտա Կէրկէրեան՝ Ա մանկապարտէզ: Խնամակալ Մարմինը, նրկատի ունենալով մանկապարտէզի կամաւոր ուսուցչուհի Տիկ. Հ. Կէրկէրեանի մեկնումի պարագան, պաշտօնապէս ընդունեց Տիկ. Արմինէ Վարապետեանը, որպէս մանկապարտէզի պատասխանատու եւ փոքրերու պարուսոյց: Խնամակալ Մարմինը, գրեթէ ամէն Երաթ, ներկայութեամբ դասաւանդութեան հսկելով, պէտք եղած օգնութիւնը կը կատարէ դպրոցէն ներս: Առաջնորդարանի Կրթական Բաժնի Միօրեայ դպրոցներու յատուկ ծրագիրով կը դասաւանդուին մայրենի լեզու, Ազգ. Պատմութիւն, Կրօնք եւ հայկական երգ ու պար:

1982-83 տարեշրջանին արձանագրուող աշակերտութեան թիւը կը հասնի 87-ի: Ալեք Մանուկեան Վարժարանին եւ փոխադրական միջոցներու զործածութեան համար որոշ վարձք կը վճարուի: Կրթական որոշ օժանդակութիւն կը ստացուի Դաշնակցային եւ Նահանգային կառավարութեանց կողմէ, ու իր հասութեաբեր ձեռնարկներով հազիւ կրնայ հաւասարակշռել իր տարեկան նախահաշիւը:

Այս տարի որոշուեցաւ աշակերտութեան ամսական վճարումը 15-էն 20-ի բարձրացնել եւ նիւթական նեղ պայմաններու տակ գտնուող ուսանողներ ձրիաբար ընդունիլ վարժարանէն ներս:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՅՈՒՆ. - 1982 Փետրուար 20-էն սկսեալ. 20 Փետրուար 1982, Վարժարանի դիմակաւոր պարահանդէսին փոխարէն, պատասխանատուութեամբ Պրն. Գէորգ Փելթէքեանի եւ կազմակերպութեամբ Պարոյր Սեւակ, Թէքէեան եւ ՀԲԸՄ-ի Երիտասարդներուն, Եկեղեցւոյս Մարի Մանուկեան Սրահին մէջ տեղի ունեցաւ տիպօ ձեռնարկ մը, որ ապահովեց 2000 տոլարի հատոյթ մը ի նպաստ վարժարանիս: Այս ձեռնարկը ոչ միայն իր յաջողութեան համար, այլեւ երիտասարդ հոգիներու կողմէ միասնաբար հայ դպրոցի հանդէպ սիրով ու կամեցողութեամբ ցուցաբերուած զովելի արարք մը ըլլալով գնահատուեցաւ:

27 Մարտ 1982.- Վարժարանի 25-ամեակի Արծաթեայ Յոթելեանի Գանդիսուղիներ տեղի ունեցաւ Ալեք Մանուկեան Վարժարանի Կէօնճեան Սրահին մէջ: Յատկապէս Նիւ Եորքէն ժամանեց եւ հովանաւորեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ: Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, ներկայ եղաւ նաեւ Կրթական Բաժնի Տեսչուհի՝ Օր. Սիլվա Տէր Ստեփանեան: Կարգադիր Յանձնախումբը ատենապետութեամբ Պրն. Վահէ Զէթլիի, Խնամակալ Մարմինը շանք չինայեց գեղարուեստական եւ այլ բաժիններու յաջողութեան համար: Երեկոյ թին ելոյթ ունեցան վարժարանի շրջանաւարտ սաներ, աշակերտներ, երգչախմբային կառարողութեամբ, դեկավարութեամբ՝ Տիկ. Սելմա Զէքլիկեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ՝ Օր. Անի Էսէկիւլեանի, ինչպէս նաեւ հայկական պարերով, դեկավարութեամբ՝ Պրն. Յակոբ Զլըճեանի: Առաջնորդարանի կողմէ յուշանուէրներով գնահատուեցան վարժարանի երկարամեայ նուիրեալ ծառայող Տիկ. Էլտա Աքքիարիթեան եւ վաստակաւոր տնօրէն՝ Պրն. Օննիկ Գալուստեան, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ ժրջան հովիւն ու ծխ. Խորհուրդոյ ատենապետ՝ Պրն. Արթո Պասմաճեան: Այս առիթով պատրաստուեցաւ Վարժարանի 25-ամեայ Յուշամատեն Գրքոյկ մը եւ Ս. Գր. Լուսաւորիչ Շքաթօրեայ Վարժարանի մակագրութեամբ կապոյտ շապիկներ որպէս համազգեստ: Վարժարանի Խնամակալութեան նախաձեռնած այս Գանդիսուղիներ անմոռանալի յուշ մը արձանագրեց մոնթրէալահայ գաղութի պատմութեան մէջ:

28 Մարտ 1982.- Կիրակի, Վարժարանի աշակերտութիւնը խմբովին եկեղեցի փոխադրուեցան օթօպիլսներով եւ ներկայ եղան Սրբազան Հօր մատուցած Ս. Պատարագին:

19 Ապրիլ 1982.- Աշակերտութիւնը ստացաւ Ս. Զատիկուան հաղորդութիւն, Տէր Հօր ձեռամբ:

5 Յունիս 1982.- Տարեվերջի Գանդեսը տեղի ունեցաւ Մարի Մանուկեան Սրահին մէջ: Ներկայ եղաւ Նիւ Եորքէն, Կրթական Բաժնի Վարիչ՝ Պրն. Նուար Զիւքէլեան, որ Ուսումնական Խորհուրդի կողմէ յուշանուէր յանձնեց Վարժարանիս ցոյց տուած յաջողութիւններուն համար: Երջանաւարտներուն յանձնուեցաւ իրենց վկայականները: Յաջողագոյն աշակերտներէն երկուքը Նիւ Եորք դրկուեցան Առաջնորդարանիս կազմակերպած մրցոյթին մասնակցելու որպէս հիւր, որոնք խլեցին առաջնութիւնը: Երկու ամսուան արձակուրդէ ետք, Խնամակալ Մարմինը իր վերոյիշեալ կազմով սկսաւ գործունէութեան:

11 Սեպտեմբեր 1982.- Բացում 1982-83 տարեշրջանի:

30 Հոկտեմբեր 1982.- Վարժարանին մէջ կէսօրուան զբօսանքին, տեղի ունեցաւ Գանատական հալոյվինի տարագաւոր մրցում մը, աշակերտութեան մէջ ստեղծելով զուարթ ու խանդավառ մթնոլորտ մը:

18 Դեկտեմբեր 1982.- Ալեք Մանուկեան Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Տօնածառի Գանդիսուղիներ: Մախազահութեամբ Տ. Բարթոլ Ա. Զինյ. Խրքանեանի ներկայ եղան ծխ. Խորհուրդի, Խնամակալ Մարմնի անդամներ, մի քանի ծնողներ, տնօրէնութիւն եւ ուսուցչաց կազմ: Գործադրուեցաւ աշակերտական կոկիկ յայտագիր մը: Տօնական եւ ազգային հայկական երգերով, արտասանութիւններով Գանդեսեան մանկապարտէզի եւ այլ կարգերու սիրասուն ուսանողներ, յուզելով ներկաները: Ապա Կաղանդ Պապայի նուէրներով եւ Խնամակալութեան հիւրասւրբութեամբ երջանիկ տօնական ուրախութեամբ մեկնեցան անոնք իրենց տունները: Վարժարանը 25 Դեկտեմբեր եւ 2 Յունուար Շքաթ օրերուն փակ մնաց արձակուրդի առիթով:

20 Դեկտեմբեր 1982.- Ծնողական հաւաքոյթ տեղի ունեցաւ Եկեղեցւոյս Վաչէ Յովսէփեան Սրահին մէջ, նախազահութեամբ Տէր Հօր: Ուրիշ տարիներու բաղդատմամբ, այս տարի, բաւական թիւով ծնողներ ներկայ գտնուեցան այս հաւաքոյթին:

Աշակերտութեան եռամսեայ վիճակացոյցները յանձնուեցան ծնողներուն, որոնք բոլորն ալ գնահատանքով արտայայտուեցան վարժարանի տարած ջանքերուն: Խնամակալութեան կողմէ կատարուած հիւրասիրութենէն ետք, կազմուեցաւ ծնողան Յանձնախումբ մը յառաջիկայ դիմակաւոր պարահանդէսին համար:

6 Յունուար 1983.- Հայկական ծնունդի տօնակատարութիւն: Առաջնորդարանի կողմէ նախաձեռնուած այս հանդիսութեան մասնակցեցան Արմէն-Քէպէքի եւ Շաքաթօրեայ վարժարժարաններու աշակերտութիւնը: Նոյն օրը, աշակերտութիւնը ամբողջութեամբ եկեղեցի փոխադրուեցաւ, ներկայ եղաւ աթարողութեան, ստացաւ հաղորդութիւն Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ: Եկեղեցւոյ արարողութիւններէն վերջ, մօտ 500 աշակերտներ Մարի Մանուկեան Սրահին մէջ, զեղեցկօրէն պատրաստուած սեղաններու շուրջ, վայելեցին Հոգեւոր Հովիւ Տէր Հօր գլխաւորութեամբ ու յատուկ հոգածութեամբ կարգադրուած ու պատրաստուած հիւրասիրութիւնը: Առաջնորդ Հօր նախագահութեամբ, սոյն հանդիսութեան ներկայ եղան Կրթական Բաժնի զոյգ վարիչներ՝ Օր. Սիլվա Տէր Ստեփանեան եւ Պրն. Նուպար Քիւփէլեան, ծխական Խորհուրդի Ատենապետին գլխաւորութեամբ անդամներ, զոյգ վարժարաններու Հոգաբարձութեան եւ Խնամակալութեան անդամներ, ուսուցիչներ եւ հիւրեր: Զոյգ վարժարաններու աշակերտութիւնը տօնական երգերով ու իրենց համար յատկապէս վարձուած մարիօնէթներու ցուցադրութեամբ, ուտելիքներով, Կաղանդ Պսպայի գալուստով եւ Սրբազան Հօր յատուկ նուէրներով ուրախ ու անմոռանալի օր մը ապրեցան: Նոյն օրը, պատկերասփիւռէն, օրուան լուրերուն հետ հաղորդուեցաւ նաեւ Հայկական ծնունդի եկեղեցական արարողութիւններէն եւ տղոց խրախմանքէն մասեր: Մոնթրէալի պատմութեան մէջ, աննախընթաց այս կատարողութիւնը, ոչ միայն աշակերտութեան, այլ գաղութին համար եղաւ յիշատակելի ու տպաւորիչ ծննդեան տօն: Աստուած օգնական մեր սիրելի Առաջնորդ Սրբազան Հօր:

Վարժարանիս Խնամակալ Մարմինը այժմ կը պատրաստուի իր տարեկան գլխաւոր ձեռնարկին: դիմակաւոր պարահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Փետրուար 19-ին, Մարի Մանուկեան Սրահին մէջ: Ծրագրուած է՝ 1.- Երիտասարդներու կազմակերպութեամբ տիսքօ մը. 2.- Հրապարակելու է վիճակահանութեան 3000 տոմսեր մէկ տոլարնոց, երեք արժէքաւոր նուէրներով. 3.- Ծրագրուած է նաեւ կիրակնօրեայ երգի եւ պարի դասընթացքներ, դեկավարութեամբ Պրն. Քլըմեանի: Այս վերջնոյն անհանգրստութեան պատճառաւ, այս դասընթացքները, կը ստիպուինք ի գործ դնել Փետրուար ամիսէն սկսեալ:

Խնամակալ Մարմինը վերջացնելէ առաջ իր տեղեկատուութիւնը, պարտք կը զգայ իր շնորհակալութիւնը յայտնել Արժ. Տ. Բարթող Ա. Քհնյ. Խրքաձեանի, Պատ. Ժս. Խորհուրդին եւ իրեն պատկան մարմիններուն եւ ջոյր Միութիւններուն աջակցութեան, նաեւ նախկին եւ ներկայ տնօրէններուն, ուսուցչաց կազմին եւ սիրելի ծնողաց: Մասնաւոր շնորհակալութիւն նաեւ Ա. Մանուկեան Վարժարանի Տնօրէն-Վարչութեան, որոնց բարեկամեցողութեամբ եւս կը քաջալերուի վարժարանին մէջ ամէն Շաքաթ օր ժամը 10-էն մինչեւ 2.30, ուր մեր սիրասուն աշակերտները եւս հայ դպրոցի մը բարիքները վայելելով հպարտանքով կը յամախեն դպրոց:

Այս առիթով, անգամ մը եւս, բոլորին ուժ եւ կարողութիւն կը մաղթենք, որպէսզի ալ աւելի զօրավիզ կ'անգնին Աստուածահաճոյ այս աշխատանքին փառաւորութեան համար:

Ի դիմաց Խնամակալութեան
ԷԼՏԱ ԱԸՔԻՊՐԻԹԵԱՆ
Ատենապետ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՅԵԱՆ
Ատենադպիր

Եկեղեցւոյս այս տարեշրջանի Տիկնանց Միութիւնը իր տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովը գումարեց 13 Մարտ 1982-ին, եւ նորընտիր Վարչութիւնը իր դիւանը կազմեց ըստ հետեւեալին: Տրուած ըլլալով որ այս տարի Վարչութիւնը, նոր որոշումով մը ունեցաւ 11 անդամ, փոխան 9-ի:

- Տիկ. Բերեկա Թաշճեան ~ Ատենապետ
- Տիկ. Հայկունի Կուտուզեան ~ Փոխ-ատենապետ
- Տիկ. Հայկանոյշ Կէրիքեան ~ Ատենադպիր
- Տիկ. Եուշան Բրուտեան ~ Փոխ-ատենադպիր
- Օր . Անահիտ Թաղէոսեան ~ Գանձապահ
- Տիկ. Ալիս Մարկոսեան ~ Փոխ-գանձապահ
- Տիկ. Բոզ Տիգրանեան ~ Խորհրդական
- Տիկ. Հոփսիմէ Տէրիմէնճեան ~ Խորհրդական
- Տիկ. Վեհանոյշ Շամլեան ~ Խորհրդական
- Օր . Ալիս Պետրոսեան ~ Խորհրդական
- Օր . Մերսէտէս Սարաֆեան ~ Խորհրդական

Տիկնանց Միութիւնս իր բոլոր կարելին ի գործ դրաւ, այս տարի եւս, օգտակար ըլլալու Եկեղեցւոյս, հետեւեալ աշխատութիւնները իրագործելով.

ՃԱՇԵՐՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՄ .- Զատկուան մեր աւանդական ճաշին ունեցանք նաեւ Հոլանտայէն գաղթող մեր հայրենակիցներու ներկայութիւնը, մօտաւորապէս 50 հոգի, Տիկնանց Միութիւնս սիրայօժար հրաւիրեց զիրենք, որպէսզի մաս կազմեն Զատկուան աւանդական սեղանին: Յաջորդաբար ունեցանք ԱՊՐԻԼ 24-ի մատաղամաշը, Մայրերու Օրուան նուիրուած հաւաքոյթ-ճաշկերոյթը, Եկեղեցւոյս պարտամուրհակի հրկիզման առթիւ սարքուած ճաշկերոյթը եւ վերջապէս Խաչվերացի Տօնին սարքուած ճաշկերոյթը: Միութիւնս առանձնապէս ունեցաւ նաեւ Սուրբերու տօնակատարութեան առթիւ, Միջինքին, ճաշկերոյթ-հանդէս մը:

ՊՏՈՅՏՆԵՐ .- Այս շրջանին եւս կազմակերպուեցան պտոյտներ Եուկըր Փարթիի, դէպի գեղատեսիլ Լորէնշընի լեռնաշղթաները եւլն., որոնք ամէն առիթով կը ստեղծեն բացառիկ խանդավառութիւն, լաւագոյն օր մը անցուցած ըլլալու գոհունակութիւնը պատճառելով բոլոր մասնակցողներուն:

ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՆԿԻԹՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՄ .- Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս, պատրաստուեցան գունաւոր հաւկիթներու եւ տուրմերու գեղեցիկ կողովիկներ, ինչպէս նաեւ աւանդական չէօրէկը: Այս տարուան մեր այս ձեռնարկին իր անփոխարինելի նպաստը բերաւ Միութեանս երէց անդամներէն: Տիկ. Սօֆի Պէլկին, որ իր շուրջ ունենալով բազմաթիւ աշխատողներ, ի ներառեալ Պրն. Միսաք Կուտուզեանը, որուն աջակցութիւնը անուրանալի է: Այս ձեռնարկը, ինչպէս նախանցեալ տարիներուն, այս անգամ եւս ապահովեց նիւթական շօշափելի հասոյթ մը:

ՀԱՌԱՔՈՅԹՆԵՐ .- Վարչութիւնս ջանաց միշտ կապը սերտ պահել մեր անդամուհիներուն միջեւ եւ գանազան առիթներով սարքեց թէյասեղաններ եւ ճաշկերոյթներ ի մի հաւաքելով Տիկնանցի բոլոր անդամուհիները:

ՏԱՐԵԿԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՒ .- Այս բոլորին յաջորդեց Միութեանս գլխաւոր ձեռնարկը՝ տարեկան պագարը, որ տեղի ունեցաւ 4-5 Դեկտեմբեր շաբաթավերջին, անգամ մը եւս ստեղծեց բացառիկ եռուզեո ու խանդավառութիւն:

Ուստեղէններու բաժինը, որ մեր մեծ յաղթանակի բաժինն է, պատրաստուեցաւ մեր սիրելի անխտիր բոլոր անդամուհիներու տքնաջան աշխատութիւններուն ու յարատեւ ջանքերուն շնորհիւ: Չեռագործներու, բրդեղէն հիւսուածեղէններու եւս տարուած էր բացառիկ աշխատանք, տարուան ընթացքին, որոնք պատրաստուած էին մեր անդամուհիներու եւ կարգ մը ազնիւ համակիրներու կողմէ: Ենորհիւ հոյլ մը ազնուահոգի անձերու եւ Միութեանս անդամներուն եւ Վարչութեան կազմին կատարած զոհողութիւններուն, այս տարի եւս, Եկեղեցւոյս կարելի եղաւ ապահովել 5000 տուարի շօշափելի գումար մը:

Տիկնանց Միութեան Վարչութիւնը, այս տարեշրջանին արձանագրած յաջողութիւններուն առնթեր, կ'ուզէ յայտնել խորին շնորհակալութիւններ իր բոլոր անդամուհիներուն անխտիր, ինչպէս նաեւ համակիրներուն, որոնք ամէն առիթով թիկունք կը կանգնին եւ զօրավիգ կ'ըլլան իրենց անգին մասնակցութիւնները չխնայելով:

Ենորհակալութեան լայն բաժին մը գաղութիս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Բարթող Ա. Քհնյ. Խրքաճեանի որ մեծ հոգածութիւն ցոյց կուտայ մեր աշխատանքներու իրագործման:

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնս միշտ գործած է եւ պիտի շարունակէ գործել պայծառ պահելու մեր Եկեղեցին, ի փառս մեր պատուական ազգին:

Ի դիմաց Վարչութեան

ՐԵՐԵԿԱ ԹԱՇՃԱՆ
Ատենապետ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԷՐԻՔԵԱՆ
Ատենադպիր

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Գովանիին ներքեւ, աւել-
ցաւ նաեւ նոր մարմին մը, սկսելով 1982 Յունուարէն, բաղկացեալ մօտաւորա-
պէս երեսուն անդամ-անդամուհիներէ:

Եկեղեցւոյս ժրջան ու պարտաճանաչ Գովիւ Արժ. Տ. Բարթող Ա. Քհնյ. Խոր-
քամեանի նախագահութեամբ 8 Փետրուար 1982-ին գումարուած անդրանիկ նիստին,
Տէր Հօր փափաքով այս մարմինը անուանուեցաւ "Հոգատար Մարմին":

Յաջորդիւ կազմուեցաւ վարչական դիւանը բաղկացեալ հետեւեալներով, որ
վաւերացուեցաւ Պատուարժան ծխական Խորհուրդին կողմէ:

- | | |
|------------------------|------------|
| Տիկ. Մելինէ Արսէվէր | Ստենապետ |
| Տիկ. Աստղիկ Սրմաքէշեան | Ստենադպիր |
| Տիկ. Մարի Կէրիքեան | Գանձապահ |
| Տիկ. Մարի Փիլաֆեան | Խորհրդական |
| Օր. Թազուհի Աղազարեան | Խորհրդական |

ԳՈՐԾՈՒՄԷՆՈՒԹՅՈՒՆ .- Խումբերու հերթական բաժանմունքով, սկսանք մատակարարել
կիրակնօրեայ թեթեւ ճաշերու, սուրճի եւ անուշեղէններու
սպասարկութիւնը. ստանձնելով նաեւ մկրտութիւններու ուրախ եւ հոգեզանգստնե-
րու տխուր առիթներով ճաշերու մատակարարութիւնն ու սպասարկութիւնը:

Գարնան ու աշնան սկզբնաւորութեան կազմակերպուեցաւ գործածուած իրերու եւ
հագուստներու վաճառք մը Ramage Sale ,որ արդիւնաւորուեցաւ մեծ յաջողու-
թեամբ: Ամառուան երկու ամսուան դադարէ մը ետք, աշնան ունեցանք մեր անդրա-
նիկ ճաշապարտ. Հոկտեմբեր 2-ին, որ ստեղծեց անսխընթաց ոգեւորութիւն եւ
պատճառեց բացառիկ գոհունակութիւն ներկայ եղող մօտաւորապէս 300 հրակիրեալ-
ներուն, որոնք յայտնեցին իրենց գնահատանքը կազմակերպիչ յանձնախումբի ան-
դամներուն: Վերոյիշեալ գործունէութիւններուն յաջորդեց Կաղանդուան խրախ-
մանքը, Դեկտեմբեր 31-ին, որը արձանագրեց առաւել եւս յաջողութիւն: Այս խր-
րախմանքը միասնաբար պատրաստուեցաւ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան
ՀՅԵՎԱ-ի հետ:

Վարչութիւնս, այս շրջանին, իր ձեռք ձգած յաջողութիւններուն առնթեր,
պարտք կը զգայ նախ իր շնորհակալութիւնները յայտնելու Արժանապատիւ Տէր
Հօր, որ միշտ եւ ամէն առթիւ, թիկունք կանգնեցաւ մեր աշխատութիւններուն:

Ենորհակալութեան պարտքի բաժին մըն ալ մեր շատ ազնիւ անդամ եւ անդամու-
հիներուն, որոնց անձնագոր մասնակցութեամբ կարողացանք ի յայտ բերել արձա-
նագրուած մէն մի յաջողութիւնները: Ենորհակալ ենք նաեւ մեր բարեպաշտ ժո-
ղովուրդին, որոնց բարոյական ու նիւթական քաջալերանքին շնորհիւ արդիւնա-
ւորուեցան մեր ջանքերը:

Այս առթիւ, կ'ուրախանք հաւատարմօրէն ծառայել պայծառ ու շէն պահելու
մեր պաշտելի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին:

Ի դիմաց Հոգատար Մարմնի Վարչութեան

ՄԵԼԻՆԷ ԱՐՍԷՎԷՐ
Ստենապետ

ԱՍՏԴԿ ՍՐՄԱՔԷՇԵԱՆ
Ստենադպիր

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի 1982 տարեշրջանի գործնական անշարժութենէ ետք, նոյն տարուան Օգոստոսին, Յանձնախումբս վերակազմուեցաւ Պրն. Պերճ ֆազլեանի ատենապետութեան տակ, Փոխատենապետ՝ Տիկ. Սեւմա Բէքլիկեան, Ատենաղախը՝ Պրն. Օննիկ Գալուստեան, գանձապահ՝ Տիկ. Էլտա Աքքիպրիթեան, եւ խորհրդական անդամներ՝ Տիկ. Այտա Գարիպեան, Տիկ. Սրբուհի Տէր Օհաննէսեան, Պրն. Վահան Եաքարեան: Առաջին նիստին, որոշուեցաւ կազմակերպել երեկոյթ մը գեղարուեստական, նուիրուած՝ Ս. Ներսէս Ենորիալիի ծննդեան 880-ամեակին առթիւ:

Պրն. Պ. ֆազլեանի բազմազբաղ վիճակին պատճառաւ, կարճ ժամանկ, Յանձնախումբը մնաց անշարժ: Երբ Խորհուրդի որոշումով ու առաջարկով, Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի ատենապետութեան պաշտօնը ստանձնեց Տիկ-Սեւմա Բէքլիկեան: Այսուհետեւ, Յանձնախումբի կազմը ենթարկուեցաւ փոքր փոփոխութեան: Տիկ. Է. Աքքիպրիթեան, անձնական պատճառներով, հրաժարեցաւ իր պաշտօնէն, ինչպէս նաեւ Տիկ. Մ. Տէր Օհաննէսեան, խճողուած աշխատանքի մէջ ըլլալով, անդադար կը բացակայէր ժողովներէն: Յանձնախումբը անմիջապէս, ընտրեց այլ թեկնածուներ, որոնք կը ներկայացնեն Յանձնախումբիս այժմու կազմը, ըստ հետեւեալին.

- | | |
|-------------------------|------------|
| Տիկ. Սեւմա Բէքլիկեան | Ատենապետ |
| Պրն. Սուքիաս Գումրուեան | Ատենաղախը |
| Պրն. Վահան Եաքարեան | Գանձապահ |
| Տիկ. Այտա Գարիպեան | Խորհրդական |
| Տիկ. Մարի Կարապետեան | Խորհրդական |
| Տոքթ. Տիգրան Տիգրանեան | Խորհրդական |
| Պրն. Օննիկ Գալուստեան | Խորհրդական |
| Տ.Տ. Սուրէն Ազազլեան | Խորհրդական |

Տարւոյս Յունուար 16-ին, Կիրակի օր յետ միջօրէին, տեղի ունեցաւ Ներսէս Ենորիալիի նուիրուած գեղարուեստական ինքնատիպ հանդէսը, որը արձանագրեց բացառիկ մեծ յաճողութիւն: Մուտքը ազատ էր, սակայն, ներկաներու սրտաբուխ նուէրներէն զոյացաւ 200 տոլարի գումար մը:

Գիրքերու կանոնական վաճառումները, ինչպէս նաեւ Հայկական Համայնագիտարաններու բաժանորդներուն ցրուումի աշխատանքները շարունակուեցան ամենայն բծախնդրութեամբ, շնորհիւ Եկեղեցւոյս Դիւանապետին, որոնց շնորհիւ, այսօր, Յանձնախումբս ինքնաբաւ է նիւթական տեսանկիւնէն դիտուած:

Այժմ, Յանձնախումբս, կ'աշխատի նոր թափով ապագայ ծրագիրներու վրայ:

Ի դիմաց Յանձնախումբի
ՍԵՒՄԱ ԲԷՔԼԻԿԵԱՆ
Ատենապետ
ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒԵԱՆ
Ատենաղախը

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ՀՆԵՎԱ-ի նորակազմ Վարչութիւնը, վաւերացուելէ յետոյ Պատուարժան ծխ. Խորհուրդոյ կողմէ, իր անդրանիկ ժողովին ընթացքին, տեղի ունեցած Յունիս 4-ին, կազմեց իր դիւանը ըստ հետեւեալին.

- | | |
|------------------|------------|
| Սեւան Սրմաբէշեան | Ատենապետ |
| Թալին Փելթեբեան | Ատենադպիր |
| Հայկ Տիգրանեան | Գանձապահ |
| Արա Տէմիրճեան | Խորհրդական |
| Զարեհ Տիգրանեան | Խորհրդական |

ԳՈՐԾՈՒՄԷՆՈՒԹԻՒՄԸ .- նորակազմ Մարմինս իր անդրանիկ ձեռնարկը տուաւ տիւքօ հաւաքոյթով մը, "Պիչ Փարթի" անուան տակ:

Յաջորդաբար մասնակցեցանք 20 անդամներով, Սեպտեմբեր 2-5 օրերուն Հարթֆորտ, Զընաթիբէթի մէջ տեղի ունեցած համայն ՀՆԵՎԱ-ի մարզական շաքաթին, որուն ընթացքին մեր ներկայացուցիչները արժանացան. գնահատանքի իրենց ձեռք բերած յաջողութիւններուն համար:

Շարժանկարի ցուցադրութիւն, Հոկտեմբեր 29-ին, կազմակերպութեամբ Վարչութեանս, թէեւ չգտաւ ակնկալուած հետաքրքրութիւնը, սակայն իր տեսակին մէջ նորութիւն մըն էր:

Ջրիամըսի առթիւ, Դեկտեմբեր 18-ին, կազմակերպուեցաւ երկրորդ տիւքօ մը:

Դեկտեմբեր 31-ին, Կաղանդի խրախմանք կազմակերպուեցաւ միասնաբար Եկեղեցւոյս Հոգատար Մարմին, որը արժանագրեց ըստառիկ յաջողութիւն եւ արժանացաւ մեծ ընդունելութեան:

Վարչութիւնս եւ ՀՆԵՎԱ-ի բոլոր անդամ-անդամուհիները, իրենց գործօն մասնակցութիւնը բերին Շաքաթօրեայ Վարժարանի 25-ամեակի ձեռնարկին, ինչպէս նաեւ Եկեղեցւոյս տարեկան պարահանդէսին, ամբողջ սպասարկութիւնը եւ աշխատութիւնները ստանձնելով:

ՀՆԵՎԱ-ի Մոնթրէալի մասնաճիւղը կը շարունակէ իր աշխատանքները, ընթացք տալով իր շարքերուն մէջ առնելու նոր երիտասարդներ, որոնք պիտի գան միանալու, մեծ թափով շարունակելու ի փառս մեր սիրելի Եկեղեցւոյ:

Ի դիմաց ՀՆԵՎԱ-ի Վարչութեան

ՄԵՌԱՆ ՍՐՄԱՐԷՇԵԱՆ
Ատենապետ

ԹԱԼԻՆ ՓԵԼԹԵԲԵԱՆ
Ատենադպիր

Քննեցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի մուտքի եւ ելքի, ինչպէս նաեւ հաշուեկշիռի ցուցակները՝ 1 Յունուար 1982 թուականէն մինչեւ 31 Դեկտեմբեր 1982-ը ընդգրկող շրջանի համար: . .

Մեր քննութիւնները եղան, ընդհանրապէս ընդունուած հաշուեքննական մակարդակի վրայ, եւ պարփակեցին հաշուական տոմարներու եւ փաստաթուղթերու վաւերական ձեւի մշղման, որ հարկ տեսանք զանազան պայմաններու տակ:

Ըստ մեր կարծիքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի ցոյց տուած մուտքի եւ ելքի հերթական կանոնաւոր տեղեկատուութիւնները, մշարիտ կերպով, կը ներկայացնեն իր 1982 տարեշրջանի գործունէութիւնը եւ իր վիճակը 31 Դեկտեմբեր 1982-ի վերջաւորութեան, նախորդ տարիներու որդեգրած հաշուակալական սկզբունքներու հիման վրայ:

Հաշուեքննիչ Մարմին:

ՄԻՍԱՔ ԿՈՒՏՈՒՋԵՄ

ՀՐԱՉ ԹՈՐԻԿԵՄ

ԹՈՒՄԱՄ ԿԱՐԱՊԵՏԵՄ

<u>Մ Ո Ւ Տ Բ</u>	<u>31.12.82</u>	<u>ՊիՆՏժէ</u>	<u>31.12.81</u>
Եկեղեցւոյ մոմավառութենէ եւ պնակէ ..	\$16.942	\$14.500	\$13.703
Եկեղեցւոյ կալուածէն վարձք.....	8.220	6.500	6.025
Իւնայթրտ Չըրչէ վարձք	5.000	—	—
"Բուրաստան" Պարբերութիւններէ	3.307	3.500	3.330
Խորհրդակատարութիւններէ	9.445	9.000	7.455
Անդամատուրքերէ	9.460	14.000	12.955
Նուիրատուութիւններէ	32.987	24.000	22.470
Իւղազին նուիրատուութիւններէ	7.519	7.000	6.834
Պարտքի Եիջման նուիրատուութիւններէ ..	—	—	2.110
Նորոգութեան նուիրատուութիւններէ ..	16.830	4.000	2.528
Ալեք Մանուկեան Հիմնարկէ	8.493	—	—
Դրամատան տոկոսէ	3.796	2.000	2.526
Գրասենեակի մուտքերէ	281	600	502
Չ Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր Է			
Շաքաթօրեայի պարանցիկէ	—	7.000	5.516
Ջատկուան հաւկիթներէ (Տիկնանց)	2.021	2.000	1.821
Պարահանդէս նախկին տարուան	1.797	3.000	1.635
Տարեկան Պարահանդէսէ	8.676	8.000	8.865
10-ամեակի Չեոնարկէ	—	5.000	—
"Հայր Մեր" քլաքներէ	334	—	—
Ապրիլ-24-ի ձեոնարկէ	—	200	690
Ջանազանքէ	—	200	460
Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Է			
Տիկնանց Միութենէ	7.000	8.000	7.146
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ	—	1.500	600
Կոմիտաս Դպրաց Դասէ	500	3.000	2.500
Հոգատար Մարմինէ	6.000	5.000	—
ԸՆԴՀԱՈՒՐ ՄՈՒՏԵՐԷ	\$148.608	\$128.000	\$109.671

<u>Ե Լ Ք</u>	<u>31.12.82</u>	<u>ՊիտՏժէ</u>	<u>31.12.81</u>
Պաշտօնէութեան	\$37.596	\$36.000	\$34.317
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԽՍԵՐՈՒ			
Հոգեւորականաց յատկացումներու..	7.555	7.000	6.237
Ընթացիկ ծախսերու	3.607	6.000	6.592
Եալուածի պահպանութեան.....	31.320	28.000	26.347
Գլխաւոր նորոգութեանց.....	31.650	10.000	9.363
"Բուրաստան" Պարբերաթերթի.....	4.334	3.500	3.241
Շաբաթօրեայ Վարժարանի	1.116	6.000	5.543
Գրասենեակի ծախսերու.....	6.724	7.000	5.666
Զանազան գործունէութեանց	499	500	—
Անոջնորդարանի տուրքի	12.214	24.000	24.020
Շիջման Յանձնախումբի փոխանցում.....	—	—	4.400
Երիտասարդաց Յանձնախումբի.....	822	—	—
	<hr/>	<hr/>	<hr/>
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԼՔ.....	\$137.437	\$128.000	\$125.726
Մուտքի առաւելութիւնն ի դէմ ելքի...	11.171	—	—
Ելքի առաւելութիւնն ի դէմ մուտքի...	—	—	16.055
Պատրաստ գումար Յունուար 1-ին	23.015	23.015	39.070
Պատրաստ գումար Դեկտեմբեր-31-ին...	34.186	23.015	23.015
Շիջման Յանձնախումբէ փոխանցում....	44.732	—	—
	<hr/>		
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին...	78.918		

ՊԻՆՏՃԷ

<u>Մ Ո Ւ Տ Ը</u>	<u>1981</u>	<u>1982</u>	<u>1983</u>
Եկեղեցւոյ անակէ	\$13.703	\$16.942	\$17.000
Եկեղեցւոյ կալուածէ վարձք.....	6.025	8.220	8.000
Իւնայթրտ Չըրչէ վարձք.....	—	5.000	5.000
" Բուրաստան" Պարբերաթերթէ.....	3.330	3.307	4.000
Խորհրդակատարութիւններէ	7.455	9.445	9.000
Անդամատուրքերէ	12.955	9.460	10.000
Նուիրատուութիւններէ	22.470	32.987	27.000
Իւղազին նուիրատուութիւններէ	6.834	7.519	8.000
Պարտքի Եւջման նուիրատուութիւններէ ..	2.110	—	—
Նորոգութեան նուիրատուութիւններէ ..	2.528	16.830	3.000
Ալեք Մանուկեան Հիմնարկէ.....	—	8.493	—
Դրամատան տոկոսէ	2.526	3.796	6.000
Գրասենեակի մուտքերէ	502	281	500
Չ Ե Ռ Ն Ա Ր Գ Ն Ե Ր Է			
Շաքաթօրեայի պարանցիկէ	5.516	—	—
Զատկուան հաւկիթներէ	1.821	2.021	2.500
Նախորդ տարուան պարահանդէսէ	1.635	1.797	3.000
Տարեկան պարահանդէսէ.....	8.865	8.676	9.000
" Հայր Մերո՞ւ բլաքներէ	—	334	1.000
Ապրիլ-24-ի ձեռնարկէ	690	—	—
Զանազանքէ	460	—	—
Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Է			
Տիկնանց Միութենէ	7.146	7.000	8.000
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ ...	600	—	500
Կոմիտաս Դպրաց Դասէ.....	2.500	500	2.000
Հոգատար Մարմինէ	—	6.000	8.000
Ծրիտասարդացէ.....	—	—	500
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒՏՔԵՐԷ.....	\$109.671	\$148.608	\$132.000

ՃԱՆՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՈՑ
1.9.8.3. ՏԱՐԵՇՐԱՅԻՒՆԻ

Ե Լ Ք	ՊԻՆՏՃԻ		
	1981	1982	1983
Պաշտօնէութեան	\$34.317	\$37.596	\$43.000
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՄՍՆԵՐՈՒ			
Հոգեւորականաց յատկաց. .	6.237	7.555	9.000
Ընթացիկ ծախսերու	6.592	3.607	4.000
Ասլուածի պահպանութեան	26.347	31.320	31.000
Գլխաւոր նորոգութեանց.....	9.363	31.650	4.000
"Բուրաստան" Պարբերաթերթի..	3.241	4.334	5.000
Շաբաթօրեայ Վարժարանի.....	5.543	1.116	9.000
Գրասենեակի ծախսերու.....	5.666	6.724	7.000
Զանազան գործունէութեանց...	—	499	—
Առջնորդարանի տուրքի	24.020	12.214	20.000
Շիջման Յանձ.ի փոխանցում...	4.400	—	—
Երիտասարդացի	—	822	—
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԼՔԵՐՈՒ	\$125.726	\$137.437	\$132.000

Մուտքի առաւելութիւնն ի դէմ ելքի	—	11.711	—
Ելքի առաւ. ի դէմ մուտքի	16.055	—	—
Պատրաստ գումար Յունուար 1-ին	39.070	23.015	78.918
Պատրաստ գումար Դեկտ. 31-ին	23.015	34.186	—
Փոխանցուած Շիջման Յանձ.է	44.732	—	—
Պատրաստ գումար Դեկտ. 31-ին	78.918	—	—

Մ Ո Ւ Տ Ք31.12.8231.12.81

Իւնայթրոս Չըրչէ տարեկան վարձքէ	—	\$4.500
Դրամատան տոկոսէ	3.274	6.432
Ժխական Խորհուրդէ	—	4.400
	—	—
	\$3.274	15.332

Ծ Լ Ք

Էալուածի պարտամուրհակներու	\$6.250	\$12.500
Պարտամուրհակներու տոկոսի	203	1.015
Դրամատան տոկոսի	—	2
	—	—
	\$6.453	\$13.517

Մուտքի առաւելուութիւն ի դէմ Ելքի	—	1.815
Ելքի առաւելուութիւն ի դէմ մուտքի	3.179	—
Պատրաստ գումար Յունուար 1-ին	47.911	46.096
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	44.732	47.911

Ժխական Խորհուրդի փոխանցուած \$44.732

Մ Ո Ւ Տ Ք

31.12.82

31.12.81

Եկեղեցւոյ պնակէ	\$1.102	\$ 979
Նուիրատուութիւններէ	1.811	970
Տարեդարձի տօնակատարութենէ	1.443	1.523
Համերգներէ	1.023	1.373
Դրամատան տոկոսէ	24	55
	<hr/>	<hr/>
	\$5.403	\$4.900

Ե Լ Ք

Երգի գիրքերու տպագրութեան	286	592
Ջանազան ծախսերու	797	620
Երգեհոնահարի եւ Դպրապետի	1.500	800
Տարեդարձի տօնակատարութեան	617	589
Երգահանդէսի	562	1.175
Ծխական Խորհուրդոյ փոխանցում	500	2.500
Մաշկերոյթի եւ հոգեմաշի	245	307
	<hr/>	<hr/>
	\$4.507	\$6.583

Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	896	—
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	—	(1.683)
Պատրաստ գումար Յունուար 1-ին	163	1.846
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	1.059	163

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.82</u>
Աշակերտած վճարումներէ	\$6.837
Ալեք Մանուկեան Հիմնարկէ	1.934
Նուիրատուութիւններէ	532
Դաշնակցային նառարութենէ	1.541
Նահանգային նառարութենէ	2.366
Ձեռնարկներ	
25-ամեակի հանդիսութիւն	5.622
Տիսթօ եւ վիճակահանութիւն	3.968
Շապիկներու վաճառում	532
Եկեղեցւոյ անակէ	68
Երկան Խորհուրդէ փոխանցում	1.116
	<u>\$24.516</u>
Ծ Լ Ք	
Ուսուցչաց վճարումներ	4.755
Վարժարանի վարձք եւ փոխադր.	8.200
Գիրք եւ գրեական պատուներ	350
Ձանազան ծախսեր	389
Ձեռնարկներու	
25-ամեակի ճաշկերոյթ	6.465
Տիսթօ եւ վիճակահանութիւն	1.486
Շապիկներու գնման	1.598
	<u>\$23.243</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	1.273
Պատրաստ գումար Յունուար 1-ին	—
Պատրաստ գումար Դեկտ. 31-ին	1.273

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.82</u>	<u>31.12.81</u>
Անդամավճարներէ	\$ 260	\$ 360
Նուիրատուութիւններէ	855	302
Ճաշերէ եւ ուտեստեղէններէ	4.579	2.074
Տարեկան տօնավաճառէ	4.627	6.453
Ջրօսապտոյտներէ	1.369	1.029
Դրամատան տոկոսէ	—	2
Ջանազանքներէ	435	—
	<u>\$12.125</u>	<u>\$10.220</u>

Ե Լ Ք

Ճաշերու եւ ուտեստեղէններ	2.096	1.039
Տարեկան տօնավաճառի	1.303	1.209
Ջրօսապտոյտներու	1.037	687
Ջանազանքներու	496	275
Ծխական Խորհուրդոյ փոխանց.	7.000	7.146
	<u>\$11.932</u>	<u>\$10.356</u>

Մուտքի առաւելութիւն իւրերէ	193	—
Ելքի առաւ. ի դէմ մուտքի	—	136
Պատրաստ զումար ՅՈԼՆ. 1-ին	500	636
Պատրաստ զումար ԴԵԿ. 31-ին	693	500

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.1282</u>
1981-ի Կադանդի Գանդիսուլթիւն .	\$2.285
Տարեկան ճաշկերոյթէ	6.536
Նուկրատուութիւններէ	771
Կիրակնօրեայ ճաշերէ	3.829
Ջանազան գործունէութիւններէ ...	2.566
	<u>\$15.987</u>

<u>Ծ Լ Ք</u>	
1981 Կադանդի Գանդիսուլթեան....	1.475
Տարեկան ճաշկերոյթի	2.416
Ուտեստեղէններու	2.406
Ջանազան ծախսերու	623
Ժխական Խորհուրդոյ փոխանցում ..	6.000
	<u>\$12.920</u>

Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	3.067
Պատրաստ գումար Յունուար 1-ին	—
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	3.067

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.82</u>	<u>31.12.81</u>
Գիրքերու վաճառքէ	\$2.400	\$3.666
Ձայնալնակներու վաճառքէ	—	208
Նկարներու վաճառքէ	—	115
Շարժանկարի ձեռնարկէ	—	62
Նուկիրատուութիւններէ	—	80
Դրամատան տոկոսէ	7	27
	<u>\$2.407</u>	<u>\$4.158</u>

<u>Ե Լ Ք</u>		
Գիրքերու գնման	854	4.464
Նկարներու պատրաստութեան	832	—
Տարեդարձի հանդիսութեան	—	355
Ցուցահանդէսի	—	219
Շարժանկարի	—	102
Ձեռնարկի	—	60
Ջանազանքի	—	90
Տպագրական ծախսերու	—	48
Ժխական Խորհուրդին փոխանցուած	—	600
	<u>\$1.686</u>	<u>\$5.938</u>

Մուտքի Առաւելութիւն ի դէմ ԵԼՔի	721	—
ԵԼՔի առաւելութիւն ի դէմ մուտքի	—	1.780
Պատրաստ գումար Յունուար 1-ին	408	2.188
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	1.129	408

Մ Ո Ւ Տ Բ31.12.1982

Անդամավճարներէ \$ 300

ՉԵՌՆԱՐԿՆԵՐ

Տիսքօ հաւաքոյթի..... 350

Հարթֆրոտ մարզական շաքաթ ... (55)

Ժապաւէնի ցուցադրութիւն (239)

Քրիսմասի Տիսքօ (45)

\$ 311

Ծ Լ Բ

Կեդրոնական վարչութեան 57

Գրեական պիտոյք 10

67

Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի 244

Պատրաստ գումար Յունուար 1-ին —

Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին 244

ԸՆԹԱՑԻԿ ԻՆՉՔ

ՊԱՏՐԱՍ ԳՈՒՄԱՐ

Ժխական Խորհուրդոյ մօտ	\$78.918	
Տիկնանց Միուլթեան մօտ	693	
Կոմիտաս Դպրաց Դասի մօտ	1.059	
Մամիկոնեան Մշակ. Ցանձ.-ի մօտ	1.129	
ՀԵՇԿԱ-ի մօտ	244	
Հոգատար Մարմնի մօտ	3.067	
Շարաթօրեայ Վարժարանի մօտ...	1.273	
	<u> </u>	\$86.383

ԿԱԼՈՒԱԾՔ ԵՒ ԻՆՉՔ (Գնման գինով)

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցի..	\$250.000	
Ցաւելուած Խորանի եւ այլ.....	22.463	
Եկեղեցապատկան ինքնաշարժի...	6.037	
	<u> </u>	278.500
Գանձուելիք Պարահանդէսէ		3.000
		<u> </u>
		\$367.883

ՊԱՐՏՔ ԵՒ ՋՈՒՏ ԱՐԾՆՔ

Ընթացիկ պարտքեր	\$15.000	
Առաջնորդարանի տուրք.....	3.500	
	<u> </u>	18.500

ՋՈՒՏ ԱՐԾՆՔ

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցի		\$349.383
		<u> </u>
		\$367.883